

*Մոխիրնոցին մէջ անոնց մահը վաւերական է դարձեալ:*

*Շեղո՞ւմ մը, «Մնացորդաց»էն:*

*«Խոնարհները» գործին հեղինակը այդպէս չի դատեր:*

*Տասը տարիէ ի վեր տիտղոսաւոր եւ արժանաւոր մարդեր կը ջանան մեր յեղափոխութեան մեծ դէմքերը կորուստէ փրկել, անոնց նուիրելով խղճամիտ ու ստուգազրոյց մենագրութիւններ: Ընդարձակ այս վերակազմումի ընթացքին՝ Մաթիկնե՞րը: Այսինքն՝ մեծ կամ պզտիկ այն հերոսնե՞րը, որոնք իրենց անձին ամբողջը դրին այդ գործին, իրենց ձեւովը, կէս, քանի որ այդպէս էր ձեւուած կեանքին բաժինն ալ իրենց: Յիմա՛ր՝ քանի որ իմաստուն չէին ծնած, բայց ազգին համար մեռնելու պահուն մեծերուն չափ մեծ եղան:*

*Մաթիկնե՞րը:*

*Կը հարցնեմ ու կը լռեմ:*

*Թող ներեն իմ ընթերցողները այս շեղումն ալ, կամ՝ ինծի:*

ì ° ð æ